



ՌՈՒՋԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵՊՀ դասախոս

ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ՏԵՔՍՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անգլերենի՝ հումանիտար կողմնորոշման ուսուցման դասընթացը կազմակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել ապագա լրագրողների, բանասերների, գրականագետների ճանաչողական, մասնագիտական պահանջմունքներն առ այն, որ նրանք իրենց մասնագիտական պարտականություններն իրականացնելիս ոչ միայն ընթերցում և թարգմանում են տարբեր բնույթի տեքստեր, այլև վերլուծում դրանք՝ հետապնդելով տարբեր նպատակներ: Հոդվածում փորձ է արվում ներկայացնելու օտարալեզու տեքստերի վերլուծության ուսուցման արդյունավետ ռազմավարություններ և գծագրական դասակարգիչներ:

Հիմնաբառեր. ռազմավարություն, գծագրական դասակարգիչ, կապակցող բառ, ենթատեքստային բանալի, վարժություն, նկարագրություն, հաջորդականություն, համեմատություն, հակադրություն

JEL: Y20, Y80, Z11, Z19

Օտարալեզու տեքստի վերլուծության ուսուցման կարևոր պայման է որոշակի ռազմավարության կիրառումը դասընթացի տարբեր փուլերում: Ինչպես ցույց տվեց համապատասխան վերլուծությունը, քննության առարկա ռազմավարությունները մշակվել են՝ նկատի ունենալով հումանիտար կողմնորոշման բառապաշարի առանձնահատկությունները, սովորողների ներքին և արտաքին ճանաչողական դրդապատճառները, հայերենի և անգլերենի մեթոդական ու լեզվաբանական տիպաբանությունը: Օտարալեզու տեքստի վերլուծության ուսուցման ռազմավարությունն ընտրելիս հարկ է հաշվի առնել տվյալ դասընթացի նպատակը, ուսուցման փուլերը, ուսանողների վերլուծական կարողությունները և հմտությունները մայրենի լեզու և գրականություն ուսումնասիրելիս:

Հումանիտար կողմնորոշման անգլերենի ուսուցման դասընթացի միջին փուլում /առաջին կուրսի երկրորդ կիսամյակ, երկրորդ կուրսի առաջին կիս-

ամյակ/ ուսանողները ծանոթանում են օտարալեզու տեքստի վերլուծության ժամանակակից ռազմավարություններին: Դրանով պայմանավորված՝ նրանք կատարում են ստեղծագործական-հետազոտական բնույթի վարժություններ և առաջադրանքներ: Օտարալեզու տեքստի վերլուծության գործընթացը հիմք է ստեղծում ուսանողների օտարալեզու խոսքը զարգացնելու թե՛ մասնագիտական, թե՛ գիտական, թե՛ կենցաղային մակարդակներում:

Տեքստի վերլուծության ռազմավարությունները հիմնականում ներառում են համապատասխան գծագրական դասակարգիչներ: Դրանց կիրառումը նպաստում է ուսանողների վերլուծական կարողությունների զարգացմանը: Ընդհանուր առմամբ, լրագրության, բանասիրության ֆակուլտետներում արդյունավետ է կիրառել «Բարձրաձայն մտածի՛ր», «Ասում են, ասում են և այլն», «Մտահանգման գծագրական դասակարգիչը», «Ընդհանրացման և գրառման ռազմավարությունը», որոնք գործնական մակարդակում ներկայացնում են «Ճարտասանական հնարների շուրջ աշխատանքի», «Կարդա՛ միայն, հստակեցրո՛ւ նպատակը և աջակցի՛ր», «Հարց ու պատասխանի», «Ինքնուրույն աշխատելու», «Հասկանալու համար ընդգծելու», «Տեքստը հետախայաց վերլուծելու», «Բովանդակային կամ էական», «Ենթատեքստը բառապաշարի հետ կիրառելու» ռազմավարությունները:

«Բարձրաձայն մտածի՛ր» ռազմավարությունը կիրառվում է ընթերցածը ներկայացնելու համար: Ուսանողները նկարագրում են դեպքերը, դեմքերը, գործողությունները և վերահսկում են իրենց հասկանալու գործընթացը¹:

«Ասում են, ասում են և այլն» (It Says, I Say, And So Graphic Organizer) ռազմավարությունն օգնում է դիտարկման գործընթացին: Դա ենթադրում է պատասխանել հարցերին՝ մտահանգումներ անելով, հասկանալով: Նրանք փորձում են հասկանալ ընթերցած նյութի բովանդակությունը, ապա տեքստից առանձնացնում են այն տեղեկատվությունը, որն օգնում է՝ ստանալու իրենց հարցերի պատասխանները: Հաջորդ փուլում ուսանողները տեքստի բովանդակությունը ներկայացնում են ինքնուրույն շարադրմամբ: Համադրելով իրենց և տեքստում ներկայացված գաղափարները՝ ուսանողները ստեղծում են նոր իմաստ, նոր տեքստ:

«Մտահանգման գծագրական դասակարգիչը» կիրառվում է սովորողների խոսքային և ունկնդրողական կարողությունները զարգացնելու, ընթերցանության նյութը հասկանալու գործընթացը վերլուծելու նպատակով²:

«Ընդհանրացման և գրառման ռազմավարությունը» (Summarizing and Note-taking) կիրառելու համար պահանջվում է տեղեկատվությունը միակցելու ունակություն: Ինչպես նշում են Մարցանոն, Պիկերինգը և Պոլոկը, «Մանրամասներն օգնում են գաղափար կազմել հիմնական գաղափարի մասին»³ (Marzano, Pickering, Pollock 2001): Ուսանողները պետք է սովորեն առանձնացնել տեքստի գլխավոր գաղափարը երկրորդական նշանակություն ունեցող տարրերից: Այդ ռազմավարությունը կիրառելիս առաջարկվում է հմտանալ հստակ պնդում-կաղապարայիններ գործածելու համար.

This detail tells me....

The text is mostly about....

¹ Տե՛ս **Davey B.**, Think-aloud: Modeling the cognitive processes of reading comprehension. Journal of Reading, 27(1), 1983:

² Տե՛ս նույն տեղը, էջ 44–47:

³ **Marzano R.J., Pickering D.J., Pollock J.E.**, Classroom instruction that works: Research-based strategies for increasing student achievement, 2001.

This is a very important detail...

This passage talks about...

Այս պնդումներն ուղղորդում են ուսանողներին՝ չշեղվելու թեմայից, հիմնական գաղափարից, չկենտրոնանալու երկրորդական նշանակություն ունեցող տեղեկությունների վրա: Առաջարկվում է նաև, որ ուսանողները ոչ միայն տարբերակեն գլխավոր և երկրորդական գաղափարները, այլև հիմնավորեն իրենց կարծիքը: Նույն աշխատանքային խմբում ներգրավված ուսանողները ոչ միայն կարողանում են հիմնավորել, ներկայացնել փաստարկներ, այլև տեղեկանում են դասընկերների լեզվամտածողությանը:

«Ընդհանրացման և գրառման» զծագրական դասակարգիչը նպատակ ունի ուշադրություն հրավիրելու տեքստի հեղինակային լեզվի վրա⁴:

Տեքստում տեղ գտած կապերի, շաղկապների, կապակցող բառերի վերլուծության ռազմավարությունը ենթադրում է համադրման, հարադրման միջոցով տարբերակելու անհատներին, գաղափարները և դեպքերը:

Ուսանողները պետք է կարողանան ներկայացնել տեքստի կառուցվածքը հետևյալ հաջորդականությամբ՝ նկարագրություն, հաջորդականություն, հիմնախնդիր և լուծում, պատճառ և հետևանք, համեմատություն և հակադրություն: Տարբեր տեքստեր ուսումնասիրելիս պետք է առանձնացվեն ազդանշանային կամ կապակցող բառերը (signal words)⁵:

Կարևոր է նշել, որ կապակցող բառերի ուսուցումն իրականացվում է տարբեր մակարդակներում՝ նկարագրական, հաջորդական, համեմատական-հակադրական, պատճառահետևանքային, հիմնախնդրի և դրա լուծման, փաստարկի և վկայակոչման, տեքստի կառուցվածքի նպատակի և կապակցող բառերի:

Կապակցող բառերի ուսուցումը տեղի է ունենում ոչ միայն տարբեր մակարդակներում, այլև տարբեր նպատակներով: Ուսանողները պետք է հստակորեն գիտակցեն, որ նկարագրելու նպատակ հետապնդելիս հարկ է կիրառել *to begin with, for example, for instance, most important, in front, beside, near, looks like, sounds like, etc.* կապակցող բառերը:

Երբ անհրաժեշտ է տեքստում տեղ գտած դեպքերը, անցքերը, իրադարձությունները ներկայացնել հաջորդականորեն, ուսանողները պետք է յուրացնեն հետևյալ կապակցող բառերը՝ *first, second, third, before, on (date), not long after, after that, next, at the same time, finally, then, following* և այլն:

Դեպքերի, իրադարձությունների, մտքերի կամ հերոսների նմանություններն ու տարբերությունները ներկայացնելիս պետք է օգտագործվեն հետևյալ կապակցող բառերը՝ *like, unlike, but, in contrast, on the other hand, however, both, also, too, as well as* և այլն:

Տեքստում տեղի ունեցող դեպքերի և իրադարձությունների պատճառները և հետևանքները համապատասխան փաստարկներով հիմնավորելու, ներկայացնելու նպատակով, ուսանողները պետք է կիրառեն հետևյալ կապակցող բառերը՝ *so, therefore, consequently, this led to, as a result, because, if...then* և այլն:

Տեքստի վերլուծության հետ կապված խնդիրները, դրանց լուծման ուղիները, քայլերը ներկայացնելիս առաջարկվում է յուրացնել հետևյալ կապակ-

⁴ Տե՛ս նույն տեղը:

⁵ Տե՛ս **Dymock S.**, Teaching expository text structure awareness. *The Reading Teacher*, 59(2), 2005, էջ 177–181:

ցող բառերը՝ because, one part of, as a result, consequently, this led to, if...then, remedy, one step of the solution is... և այլն:

Ընթերցողին ինչ-որ բան համոզելու, ապացուցելու, տարբեր փաստարկներ բերելու պարագայում առաջարկվում են հետևյալ կապակցող բառերը՝ therefore, accordingly, as you can see, in addition to, another reason, finally, In conclusion և այլն:

«Ուղեկցվող ընդգծված ընթերցանությունը» (Guided Highlighted Reading՝ G.H.R.) ենթադրում է հարցերի միջոցով օգնել ուսանողներին՝ հասկանալու, թե ինչ կառուցվածք ունի տեքստը, ինչպես են դրա բաղադրիչները փոխկապակցվում: Մինչև ընթերցելը, դասախոսը պետք է տեքստն ուսումնասիրի և այնպիսի հարցեր կազմի, որ ուսանողները կարողանան համեմատել, հակադրել, կապակցել: Մինչ դասախոսը հարցեր է տալիս, ուսանողներն ընդգծում են հիմնաբառերը կամ դարձվածքները, որպեսզի առանձնացնեն այն տեղեկատվությունը, որը կօգնի պատասխանել հարցերին: Այդպիսի աշխատանքը կնպաստի թռուցիկ կամ մանրագնին ընթերցանությամբ անհրաժեշտ տեղեկատվության վերականգնմանը⁶:

«Ճարտասանական հնարների շուրջ աշխատանքի» ռազմավարությունը ենթադրում է կիրառել տարբեր գծագրական դասակարգիչներ: Ուսանողները պետք է կարողանան գտնել և ներկայացնել համապատասխան միավորներ (e.g., parallelism, repetition, aphorism, rhetorical questioning, appeals to the audience, etc.):

«Կարդա՛ միայն, հստակեցրո՛ւ նպատակը և աջակցի՛ր» (Read-Only, Purpose Statement, Support) ռազմավարությունը ենթադրում է հետևյալ աշխատանքը: Ուսանողները ընթերցում են տեքստը՝ առանց ընդգծումներ կամ գրառումներ կատարելու: Ընթերցելուց հետո նրանք ընդգծում են այն նախադասությունը, որը ներկայացնում է հեղինակի հիմնական գաղափարը: Ապա այդ նախադասության մեջ առանձնացնում են այն բառերը, դարձվածքները, որոնք օգնում են հեղինակին՝ ներկայացնելու իր մտադրությունը: Հեղինակի միտքը հասկանալը մտնում է հեղինակին հարցեր տալու ռազմավարության մեջ: Տեքստի քննարկման նախնական փուլում այդ ռազմավարությունն արդյունավետ է⁷:

«Հարց ու պատասխանի» ռազմավարությունը (*Question/Answer Relationship՝ QAR*) համարվում է հարցման ռազմավարություն, որը շեշտադրում է *հարց – ընթերցողի հենքային գիտելիքներ* կապը: Ուսանողները օգտագործում են նշված կապը՝ հարցին պատասխանելու անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար:

«Ինքնուրույն աշխատելու» ռազմավարությունը (On My Own) ենթադրում է պատասխանել հարցերին՝ հիմք ընդունելով սեփական փորձը, հենքային գիտելիքները⁸:

«Հասկանալու համար ընդգծելու» ռազմավարությունը (*Underlining for Comprehension*) պահանջում է ընդգծել այն բառերը, բառակապակցությունները, որոնք նպաստում են տեքստի ըմբռնմանը: Սկզբում ներմուծվում են

⁶ Տե՛ս **Weber, Elaine M., Nelson, Barbara A., Schofield, Cynthia L.**, Guided Highlighted Reading. Gainesville, FL : Maupin House Publishing Inc., 2012, էջ 15–18:

⁷ Տե՛ս **Beck I.L., McKeown M.G., Hamilton R.L., Kucan L.**, Questioning the author: An approach for enhancing student engagement with text. Newark, DE, 1997, էջ 1–5:

⁸ Տե՛ս **Raphael T.**, Question-answering strategies for children. The Reading Teacher, 36(2), 1982, էջ 186–191:

հիմնաբառերը: Ուսանողները արագ, ճիշտ և խելամտորեն ընդգծում են կարևոր բառերը: Փառուկն առաջարկում է այդ նպատակով հիմնական գաղափարն արտահայտող բառերը ընդգծել երկու գծով, երկրորդական նշանակություն ունեցող տեքստային բաղադրիչները՝ մեկ գծով, ալիքաձև գծով առանձնացնել հիմնաբառերը և հիմնաեզրույթները, լուսանցքում կարճ գրառումներ կատարել: Նույնը անել տեքստի այն մասերում, որոնք վերաբերում են բուն բովանդակությանը⁹:

«Տեքստը հետահայաց վերլուծելու» (Text Lookbacks) ռազմավարությունը ենթադրում է վերանայել ընթերցած տեքստը՝ հասկանալուն միտված հարցերին պատասխանելու համար¹⁰:

Ըստ «բովանդակային կամ էական» (Gist Strategy) ռազմավարության՝ կանխագուշակումը պետք է կիրառվի որպես հասկանալուն նպաստող միջոց, երբ ընթերցվում է ուսուցանվող տեքստը: Կանխագուշակելու ունակությունը հիմնված է նախնական գիտելիքի վրա:

Նախաընթերցանական փուլում ուսանողները գուշակում են հիմնական գաղափարը՝ մասնակիորեն ընթերցելով տվյալ հատվածը և կռահելով՝ ինչի մասին է խոսքը: Կարևոր է կանխագուշակումները գրառել գրատախտակին:

Նախաընթերցանական փուլ

What do you think this text is going to be about?

What makes you think so?

What do you think it is going to tell us about our topic?

What makes you think so?

Ընթերցանական փուլ

Did you find evidence to support your prediction?

What was it?

Did you find evidence that doesn't support your prediction?

What was it?

At this point, do you want to change your prediction?

Why or why not?

Հետընթերցանական փուլում առաջարկվում են հետևյալ հուշումները՝

Have the students think about what they have read and make a final revision of the gist statement. Discuss.

Do you want to make any changes about this topic?

If yes, what changes and why?

What have you learned from this reading?¹¹:

«Ենթատեքստը բառապաշարի հետ կիրառելու» ռազմավարությունը (Using Context with Vocabulary) նպատակ ունի ձևավորելու ուսանողների բառապաշարը՝ օգտագործելով ենթատեքստային բանալիները (clues): Ըստ այս ռազմավարության՝ դասավանդողը բաժանում է ընթերցվող հատվածը կամ ցուցադրում է էկրանին: Անժանոթ բառերն ուսանողները դիտարկում են իրենց գիտելիքների համատեքստում, փորձում են բացատրել, թե ինչ նպատակով է հեղինակը դրանք կիրառել, փորձում են գուշակել, թե ինչ հնարա-

⁹ Տե՛ս **Pauk W.**, How to study in college (3rd ed.). Boston: Houghton Mifflin, 1974:

¹⁰ Տե՛ս **Reis R., Leone. P.**, Teaching text lookbacks to mildly handicapped students. Journal of Reading, 28, 1985, էջ 416–420:

¹¹ Տե՛ս **Schuder T., Clewell S., Jackson N.**, Getting the gist of expository text. In K.D. Muth, (Ed.), Children's comprehension of text, 1989, էջ 224–243:

վոր իմաստներ ունեն, ապա ստուգում են բառարաններով, ուղեցույցներով կամ խորհրդատվական մակարդակում¹²:

Օգտագործված գրականություն

1. Beck I.L., McKeown M.G., Hamilton R.L., Kucan L., Questioning the author: An approach for enhancing student engagement with text. Newark, DE, 1997.
2. Blachowicz C., Zabroske B., Context instruction: a metacognitive approach for at-risk readers. *Journal of Reading*, 33, 1990.
3. Davey B., Think-aloud: Modeling the cognitive processes of reading comprehension. *Journal of Reading*, 27(1), 1983.
4. Dymock S., Teaching expository text structure awareness. *The Reading Teacher*, 59(2), 2005.
5. Marzano R.J., Pickering D.J., Pollock J.E., Classroom instruction that works: Research-based strategies for increasing student achievement, 2001.
6. Pauk W., How to study in college (3rd ed.). Boston: Houghton Mifflin, 1974.
7. Raphael T., Question-answering strategies for children. *The Reading Teacher*, 36(2), 1982.
8. Reis R., Leone. P., Teaching text lookbacks to mildly handicapped students. *Journal of Reading*, 28, 1985.
9. Schuder T., Clewell S., Jackson N., Getting the gist of expository text. In K.D. Muth, (Ed.), *Children's comprehension of text*, 1989.
10. Weber Elaine M., Nelson Barbara A., Schofield Cynthia L., *Guided Highlighted Reading*. Gainesville, FL : Maupin House Publishing Inc., 2012.

¹² Տե՛ս **Blachowicz C., Zabroske B.**, Context instruction: a metacognitive approach for at-risk readers. *Journal of Reading*, 33, 1990.

РУЗАННА ГЕВОРГЯН*Преподаватель ЕГУ*

Стратегии обучения анализу иноязычного текста. – Важным условием обучения анализу текста на иностранном языке является применение соответствующих стратегий в гуманитарно-ориентированном курсе английского языка. Как показал проведенный анализ, рассмотренные стратегии разработаны с учетом особенностей гуманитарно-ориентированной лексики, внутренних и внешних познавательных мотивов учащихся, методической и лингвистической типологии армянского и английского языков. При отборе стратегий обучения анализу иноязычного текста следует учесть цель данного курса, этапы обучения, аналитические умения и навыки студентов, приобретенные в процессе изучения родного языка и литературы.

Ключевые слова: стратегия, графический организатор, союзные слова, контекстное слово, упражнение, описание, сравнение, последовательность, противопоставление.

JEL: Y20, Y80, Z11, Z19

RUZANNA GEVORGYAN*Lecturer at YSU*

Strategies for Teaching Foreign Language Text Analysis. – In the humanitarian-oriented English course an important condition for teaching text analysis is the use of appropriate strategies. As it is shown the discussed strategies are developed, taking into account the characteristics of humanitarian-oriented vocabulary, internal and external cognitive motives of students, the methodological and linguistic typology of Armenian and English languages. In the selection of learning strategies foreign language text analysis the purpose of the course, training stages, students' analytical habits and skills acquired in the process of studying the native language and literature. Should be taken into consideration.

Key words: strategy, graphic organizer, syndetic words, clue, exercise, description, comparison, sequence, opposition.

JEL: Y20, Y80, Z11, Z19